

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/4

27 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «ԷՍԷՆԴ» ՍՊԸ 26.12.2014 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕՀՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտի դեմ:

«ԷՍԷՆԴ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) վերաբերյալ կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕՀՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտը, որի համաձայն Ընկերությունը տուգանվել է որպես ապօրինի ընդերքչահագործող՝ 5,5 մլն դրամի չափով:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 24 հուլիսի 2012 թ-ին Ընկերությանը տրամադրվել է օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹ-29/012 Թույլատվություն ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի ավազազլաքարակոպձային խառնուրդի հանքավայրի շահագործման համար:

Համաձայն թիվ 1411918 վարչական ակտի Օպերատիվ Հետախուզության վարչությունը ՀՀ ԷԲՊՆ-ից ստացված գրությամբ արձանագրել է Ընկերության կողմից ընդերքօգտագործում թույլատվությամբ սահմանված տարածքից դուրս, իսկ ՀՀ ԷԲՊՆ-ի կողմից նույն տարածքին վերաբերող շահագործումը բնութագրվել է որպես հողի դեգրատացիա (Արձանագրություն 107), որն ամենևին ընդերքօգտագործում չէ, այլ պարզապես հողի բերրի շերտի վնասում: Իսկ այդ վնասվածքն առաջացել է տեխնիկական միջոցների հանքավայր ելք և մուտք կատարելու հետևանքում, հետևաբար լիցենզավորման անհրաժեշտություն չկա, որի համար Ընկերությունը տուգանվել է:

Ելնելով վերոգրյալից՝ «ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ն խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕՀՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕՀՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտով մասնավորապես արձանագրվել է, որ համաձայն ԱԱԾ-ից ստացված տեղեկության «ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ն չունենալով համապատասխան լիցենզիա, Արմավիրի մարզի, Երասխահուն համայնքի վարչական տարածքում զբաղվում է ավազի արդյունահանմամբ: Բացի այդ, ՀՀ ԷԲՊՆ-ից ստացված գրությամբ արձանագրվել է, որ ընկերությունն ընդերքօգտագործման աշխատանքներ է իրականացրել թույլտվությամբ սահմանված տարածքից դուրս: Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ պարբերության հաշվարկվել է տուգանք

տուրքի գումարի տասնապատիկի չափով 5.000.000 դրամ, միաժամանակ գանձման է առաջադրվել տուրքի գումարի չափով՝ գումարով 500.000 դրամ, վնասի հատուցում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ սույն գործում առկա է ՀՀ բնապահպանության նախարարի ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին հասցեագրված 24.09.2014 թ-ի թիվ 1/23./12058 գրությունը, որում մասնավորապես նշված է, որ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները ազգային անվտանգության ծառայության մասնագետների ներկայությամբ «ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ում իրականացրել են ստուգում: Արդյունքում պարզվել է, որ ընկերությունը ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում իրականացրել է գլաքարակոպճային հանքանյութի արդյունահանում նաև իրեն հատկացված տարածքից դուրս՝ ՀՀ Արմավիրի մարզի Վարդաշեն համայնքի վարչական տարածքի ջրավազանների ավիամերձ տարածքներից:

Իր հերթին, ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի թիվ 2/3/1-4517 գրությամբ հայտնվել է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների և ՀՀ բնապահպանության նախարարությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ն իրեն հատկացված տարածքներից դուրս հանքանյութի արդյունահանման հետևանքով վնասել է գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսներ և շրջակա միջավայրին պատճառել է վնաս, որը վերականգնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության: Գրությամբ հայտնվել է նաև, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից արձանագրվել են ավագի ապօրինի արդյունահանման դեպքեր «ԷՍԷՆԴ» ՍՊԸ-ին թույլտվությամբ հատկացված սահմաններից դուրս՝ երկու տարբեր հատվածներում:

Վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են «ԷՍԷՆԴ» ՍՊԸ կողմից իրեն թույլտվությամբ հատկացված տարածքից դուրս ապօրինի ընդերքօգտագործման աշխատանքներ իրականացնելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕԿ և ՆԱԳՎ ՕԿՎ 17.12.2014 թ-ի թիվ 1411918 վարչական ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

